ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՀՈԿՏԵՄԲԵՐ 2004)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
«ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի
«Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է
մակրոտնտեսական, հարկաբյուջետային, դրամավարկային,
ինչպես նաև ՀՀ վճարահաշվարկային, բանկային համակարգի
հիմնական ցուցանիշների և տնտեսական նորմատիվների
վերաբերյալ տեղեկատվություն:
Մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ
տեղեկատվության աղբյուրը
ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է,
իսկ հարկաբյուջետային, դրամավարկային և բանկային
վիճակագրության տվյալների աղբյուրը՝
ՀՀ կենտրոնական բանկը:
Դրամավարկային և բանկային վիճակագրությունում ընդգրկված է
ՀՀ միջազգային պահուստների, փողի ագրեգատների,
ֆինանսական շուկայի և փոխարժեքների վերաբերյալ
տեղեկատվություն:

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումներ
տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է.

http:// www.CBA.am

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Տնտեսական աճ: 2004 թ. հունվար-հոկտեմբերին տնտեսական աճը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, կազմել է 109.7%: ՀՆԱ-ի աճը հիմնականում պայմանավորվել է ծառայությունների (ազդեցությունը ՀՆԱ-ի աճի վրա կազմել է 4 տոկոսային կետ), գյուղատնտեսության (2.9) և շինարարության (2.1) աճով:

ՀՆԱ-ի դեֆլյատորը 2004 թ. հունվար-հոկտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, կազմել է 106.8%:

Գնաճ: Համաձայն ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 2004թ. հոկտեմբերին գրանցվել է սպառողական գների ընդհանուր մակարդակի 0.1%-ով աճ, ինչը հիմնականում պայմանավորվել է պարենային ապրանքների՝ «Չկնամթերք» (22.6%), «Կաթ և կաթնամթերք» (2.9%), «Ձու» (4.0%) և «Յուղ և ճարպ» (1.8%) ապրանքախմբերի գների աճով, որոնք ապահովել են գնաճի համապատասխանաբար 0.2, 0.1, 0.1 և 0.1 տոկոսային կետերը: Միևնույն ժամանակ, գնաճը էականորեն զսպել են «Հացամթերք» (-1.2%) և «Միրգ» (-3.8%) ապրանքախմբերը (համապատասխանաբար -0.2 և -0.1 տոկոսային կետերով):

2003 թ. դեկտեմբերի համեմատությամբ սպառողական գները նվազել են 1.1%-ով: Ընդ որում, պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) և ոչ պարենային ապրանքների գների անկումը կազմել է համապատասխանաբար 1.8% և 0.3%, իսկ ծառայությունների սակագներն աճել են 0.6%-ով:

2004 թ. հունվար-հոկտեմբերին, 2003 թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ, սպառողական գների ինդեքսը կազմել է 107.7%, իսկ հոկտեմբերին, 2003 թ. նույն ամսվա համեմատությամբ՝ 106.3%:

Բնականոն գնաճը հոկտեմբերին, սեպտեմբերի համեմատությամբ, կազմել է -0.2 %, նախորդ տարվա դեկտեմբերի համեմատությամբ՝ -0.3 %, հունվար-հոկտեմբերին, 2003 թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ, 6.0 %, իսկ հոկտեմբերին, 2003 թ. նույն ամսվա համեմատությամբ՝ 5.7 %:

Արտաքին հատված: 2004 թ. հունվար-հոկտեմբերին ապրանքների արտահանումը (FOB գներով) կազմել է 581.8 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ աճելով 1.5 %-ով: Արտահանման աճն ուղեկցվել է արտահանման մեջ 41.8 % կազմող «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի արտահանման ծավալների 20.2 % նվազմամբ: Առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի ցուցանիշները հաշվի առնելու՝ արտահանումն աճել է 26.2 %-ով՝ պայմանավորված հիմնականում արտահանման մեջ շուրջ 13.0 % կազմող «Հանքահումքային մթերքներ» և 17.1 % կազմող «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբերի արտահանման ծավալների համապատասխանաբար 87.3 % և 37.1 % աճով:

Ներմուծումը (CIF գներով) կազմել է 1087.8 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ աճելով 3.9 %-ով: Առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի ցուցանիշները հաշվի առնելու՝ ներմուծումն աճել է 10.3 %-ով՝ հիմնականում պայմանավորված ներմուծման մեջ մոտ 15.8 % կազմող «Հանքահումքային մթերքներ» և 7.6 % կազմող «Բուսական ծագման արտադրանք» ապրանքախմբերի ներմուծման ծավալների համապատասխանաբար 18.1 % և 47.1 % աճով: Միևնույն ժամանակ, նվազել են ներմուծման մեջ 23.0 % կազմող «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» և 4.5 % կազմող «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբերի ներմուծման ծավալները համապատասխանաբար 13.1 % և 25.1 %-ով:

Արդյունքում, 2004 թ. հունվար-հոկտեմբերին առևտրային հաշվեկշռի պակասուրդը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ աճել է 6.7 %-ով (առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» հոդվածի՝ 1.5 %-ով) և կազմել 506.0 մլն ԱՄՆ դոլար:

2004 թ. հունվար-հոկտեմբերին ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար անվանական միջին հաշվարկային փոխարժեքը կազմել է 541.2 դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ արժեքավորվելով 6.9%-ով: Հոկտեմբերին ԱՄՆ դոլարի միջին փոխարժեքը կազմել է 506.4 դրամ՝ նախորդ ամսվա համեմատությամբ արժեքավորվելով 1.4%-ով: 2004 թ. հունվար-հոկտեմբերին ՀՀ դրամ/եվրո անվանական միջին հաշվարկային փոխարժեքը կազմել է 664.5 դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ արժեզրկվելով 2.4 %-ով: Հոկտեմբերին եվրոյի միջին փոխարժեքը կազմել է 632.2 դրամ՝ նախորդ ամսվա համեմատությամբ արժեզրկվելով 0.9 %-ով:

Պետական հատված: Հոկտեմբերին ևս պետական բյուջեի փաստացի եկամուտներն ու ծախսերը գերազանցել են ամսվա ծրագրված մակարդակը: Հարկային եկամուտները կազմել են 23.5 մլրդ դրամ՝ ծրագրված 23.1 մլրդ դրամի փոխարեն: Միջին օրական հարկերը կազմել են 1.1 մլրդ դրամ՝ սեպտեմբերի 1.2 մլրդ դրամի և նախորդ տարվա հոկտեմբերի 0.8 մլրդ դրամի փոխարեն: Ոչ հարկային և կապիտալ եկամուտները կազմել են 0.7 մլրդ դրամ՝ ծրագրված 0.4 մլրդ դրամի փոխարեն: Հոկտեմբերին հարկերի հավաքագրումը նախորդ ամսվա համեմատությամբ ունեցել է ավելի համաչափ բնույթ, և հարկային մուտքերն ամսվա ընթացքում ավելի հավասարաչափ են բաշխվել:

Բյուջեի ծախսերը հոկտեմբերին կազմել են 27.5 մլրդ դրամ՝ ծրագրված 26.1 մլրդ դրամի փոխարեն, ինչը հիմնականում պայմանավորվել է բյուջեի եկամուտների և դրամաշնորհների՝ ծրագրվածից 0.9 մլրդ դրամով ավելի հավաքագրմամբ և միասնական հաշվում միջոցների՝ ծրագրված 0.4 մլրդ դրամով աճի փոխարեն փաստացի 0.05 մլրդ դրամով նվազմամբ:

Բյուջեի պակասուրդը կազմել է 0.8 մլրդ դրամ՝ ծրագրված 0.1 մլրդ դրամ հավելուրդի փոխարեն: Այն հիմնականում ձևավորվել է պետական արժեթղթերի տեղաբաշխումից ստացված 2.3 մլրդ դրամ զուտ մուտքերի և 1.5 մլրդ դրամ արտաքին վարկի մարման հաշվին:

Դրամավարկային քաղաքականություն: Համաձայն դրամավարկային քաղաքականության ծրագրի ամսական սցենարի՝ Կենտրոնական բանկը հոկտեմբերին նախատեսում էր փողի առաջարկն ավելացնել 2.7 մլրդ դրամով և ամսվա վերջին ապահովել փողի բազայի 116.8 մլրդ դրամ մակարդակ: Միևնույն ժամանակ, հոկտեմբերին ակնկալվում էր շուրջ 2.4 մլրդ դրամին համարժեք գումարով «Պարենային ապահովության ծրագրի» դրամաշնորհի ստացում և 1.8 մլրդ դրամին համարժեք արտաքին պարտքի սպասարկում:

Փողի բազայի փաստացի շեղումը կանխատեսված մակարդակից կազմել է 1.0 մլրդ դրամ (աճը՝ 1.7 մլրդ դրամ, ցուցանիշը ամսվա վերջին՝ 115.8 մլրդ դրամ)՝ գտնվելով տատանումների թույլատրելի միջակայքի ստորին հատվածում:

Շեղումը պայմանավորվել է ԿԲ ՁՆԱ-ի շարժերով՝ 56 մլն դրամի աճի փոխարեն 1.4 մլրդ դրամով նվազում այն պարագայում, երբ ԿԲ ՁԱԱ-ն աճել են 450 մլն դրամով ավելի, քան նախատեսված էր:

ՀՀ ԿԲ ՁԱԱ-ն աճել են 3.1 մլն դրամով և ամսվա վերջին կազմել 148.2 մլրդ դրամ: ԿԲ արտարժութային պահուստներն համալրվել են ստացված դրամաշնորհի՝ ավելի քան 2.5 մլրդ դրամին և Կենտրոնական բանկի կողմից արժութային շուկայից գնված 2.6 մլրդ դրամին համարժեք միջոցների հաշվին: Ամսվա ընթացքում իրականացվել է նաև 1.6 մլրդ դրամի արտաքին պետական պարտքի սպասարկման նպատակով Կառավարության միջոցների փոխարկում և 383 մլն դրամի այլ փոխարկումներ, որի գերակշիռ մասը (421 մլն դրամ) կազմել է արտարժույթի տրամադրման սվոփի զուտ մարումը:

ԿԲ ՁՆԱ-ի կառուցվածքային բոլոր տարրերը շեղվել են ակնկալվող մակարդակներից: Այսպես, ԿԲ հանդեպ Կառավարության զուտ պարտավորությունները նվազել են 1.7 մլրդ դրամով՝ նախատեսված 380 մլն դրամով նվազման փոխարեն, ինչը պայմանավորվել է Գանձապետական միասնական հաշվի միջոցներից ծրագրված 1.7 մլրդ դրամի ծախսման փոխարեն ընդամենը 53 մլն դրամի ծախսմամբ: Դա ուղեկցվել է նաև դրամային իրացվելիության ներարկման նպատակով ԿԲ կողմից ՊՊ երկրորդային շուկայից 230.0 մլն դրամի պետարժեթղթերի գնմամբ՝ 4% միջին տարեկան եկամտաբերությամբ, որի արդյունքում, հաշվի առած նաև մարումները, ԿԲ պետպարտատոմսերի պորտֆելը համալրվել է 189.0 մլն դրամով՝ հանգեցնելով ԿԲ հանդեպ Կառավարության պարտավորությունների աճի: Իսկ պարտավորությունների նվազումը հիմնականում պայմանավորվել է Կառավարության կողմից լրացուցիչ թողարկված և առաջնային շուկայում տեղաբաշխված շուրջ 1.9 մլրդ դրամի՝ արժեթղթերի գումարի ԿԲ-ում ավանդադրմամբ:

ԿԲ հանդեպ բանկերի պարտավորությունների ցուցանիշը ևս շեղվել է ծրագրից՝ նվազելով 169 մլն դրամով (նախատեսված 1.0 մլրդ դրամի աճի պարագայում) և ամսվա վերջին կազմելով 13.5 մլրդ դրամ: Այս ցուցանիշի փոփոխության վրա ազդել են վերոնշյալ սվոփի զուտ մարումը և բանկերի հետ կնքված 253.0 մլն դրամի ռեպո համաձայնագրերը:

ԿԲ զուտ այլ ակտիվների 396 մլն դրամով աճը ևս պայմանավորվել է սվոփի զուտ մարմամբ, քանի որ, ըստ այդ գործիքի հաշվապահական ձևակերպման, մինչև մարման ժամկետի ավարտը գումարը հաշվառվում է միջանկյալ հաշվում:

Հաշվետու ամսում փողի բազայի կառուցվածքում շարունակվել է Կենտրոնական բանկում բանկերի և այլ կազմակերպությունների հաշիվների միջոցների աճը մոտ 1.1 մլրդ դրամով, ինչն ուղեկցվել է ԿԲ-ից դուրս կանխիկի 570.0 մլն դրամով ավելացմամբ: Այս պայմաններում դիտվել է բանկային իրացվելիության միջին ամսական ավելցուկի 800.0 մլն դրամով նվազում, ինչի արդյունքում դրա մակարդակը կազմել է 4.4 մլրդ դրամ:

Փողի զանգվածը (առանց կուտակված տոկոսների) հոկտեմբերին աճել է 4.2 մլրդ դրամով և ամսվա վերջին կազմել 256.8 մլրդ դրամ: Փողի զանգվածի կառուցվածքում աճն ապահովվել է բոլոր բաղադրատարրերի հաշվին. շրջանառությունում գտնվող կանխիկն աճել է 1.3 մլրդ, իսկ ավանդները՝ 2.9 մլրդ դրամով: Ըստ արժույթի վերջինիս աճը բաշխվել է դրամային և արտարժութային միջոցների միջև 1.8 մլրդ և 1.1 մլրդ դրամ հարաբերակցությամբ, իսկ ըստ ժամկետայնության աճի բաշխման համամասնությունները հետևյալն են. ցպահանջ դրամային ավանդներն աճել են ավելի քան 1.2 մլրդ, ժամկետայինը՝ 547 մլն դրամով, իսկ ցպահանջ արտարժութային ավանդների աճը կազմել է 455 մլն և ժամկետայինը՝ 629 մլն դրամ: Դրամային տարրերի ավելացման արդյունքում դրամային զանգվածը հոկտեմբերին աճել է 3.1 մլրդ դրամով և ամսվա վերջին կազմել 129.0 մլրդ դրամ:

Ժամանակաշրջանի վերջի դրությամբ փողի և դրամային բազմարկիչները պահպանել են նախորդ ամսվա վերջի ցուցանիշները՝ համապատասխանաբար 2.2 և 1.1:

Ֆինանսական շուկայի տարբեր հատվածներում հոկտեմբերին դիտվել են տոկոսադրույքների փոփոխության համեմատաբար կայուն միտումներ, մասնավորապես, ՊՊ առաջնային շուկայում տեղաբաշխված կարճաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը նախորդ ամսվա համեմատ իջել է 1.01 տոկոսային կետով՝ կազմելով 3.99%՝ պայմանավորված ՊԿՊ-ի ժամկետայնության կրճատմամբ (մինչև 3 ամիս): Միջինժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը նվազել է 0.1 տոկոսային կետով՝ կազմելով 7.2%: Ընդ որում, հոկտեմբերին տեղաբաշխվել է ՀՀ պետական միջնաժամկետ արժեկտրոնային (առանց մասնակի մարումների) պարտատոմսերի առաջին թողարկումը 4 տարի մարման ժամկետով՝ 7.1% եկամտաբերությամբ:

Արժութային շուկայում առքի և վաճառքի ծավալները կազմել են համապատասխանաբար 106.17 մլն և 106.37 մլն ԱՄՆ դոլար, իսկ միջին կշռված փոխարժեքը՝ 505.31 դրամ, որը նախորդ ամսվա համեմատ արժևորվել է 1.32%-ով:

Բանկային համակարգի իրացվելիության խնդիրներից ելնելով, ինչպես նաև ծրագրային փողի բազայի սահմանված մակարդակն ապահովելու նպատակով ՀՀ կենտրոնական բանկը հոկտեմբերին հաճախակի հանդես է եկել դրամային գործառնությունների իրականացման հայտարարությամբ՝ մասնավորապես պետական արժեթղթերի առք, ռեպո գործառնությունների և արտարժույթի ներգրավման սվոփի կիրառում:

Հետևաբար ՀՀ կենտրոնական բանկի կողմից դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքները սահմանվել են իրացվելիության ներարկմանն ուղղված գործողությունների և ֆինանսական շուկայի իրավիճակին համահունչ՝ մասնավորապես ռեպո համաձայնագրերի տոկոսադրույքն իջեցվել է 0.25 տոկոսով՝ սահմանելով 3.75%, իսկ բանկերից ներգրավված ավանդների և լոմբարդային վարկերի տոկոսադրույքը թողնվել է անփոփոխ՝ համապատասխանաբար 1% և 16%: Հոկտեմբերին անփոփոխ է մնացել նաև բանկային տոկոսի հաշվարկային դրույքը՝ 16%:

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

(ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա)

I. Իրական հատված

Անվանում	*2004 թ. հունվար – սեպտեմբեր*	*2004 թ. հունվար-սեպտեմբերի իրական աճի ինդեքսը 2003 թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ (%)*	*2004 թ. հունվար – հոկտեմբեր*	*2004 թ. հունվար – հոկտեմբերի իրական աճի ինդեքսը 2003 թ. հունվար – հոկտեմբերի նկատմամբ (%)*
Համախառն ներքին արդյունք *(մլն ՀՀ դրամ)*	1243212.1	110.3	1484381.0	109.7
ՀՆԱ դեֆլյատոր *(%. աճողական)*	-	107.1	-	106.8
Մեկ զբաղվածին բաժին ընկնող ՀՆԱ *(հազար ՀՀ դրամ. աճողական)* [1]	1115.4	110.4	1333.4	107.4
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	377635.2	101.6	424924.5	101.5
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	4478.7	109.7	4877.2	108.9
Գյուղատնտեսության համախառն արտադրանք *(մլն ՀՀ դրամ)*	331018.4	117.2	389143.7	113.8
Մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	550466.8	109.4	623928.5	108.8
Կապիտալ շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	166020.5	116.3	196259.3	114.1
Բնակչության դրամական եկամուտները *(մլն ՀՀ դրամ)*	881036.7	108.6[1]	996263.6	107.8[1]
Բնակչության դրամական ծախսերը *(մլն ՀՀ դրամ)*	885728.9	108.1[1]	1000385.7	107.4[1]
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(ՀՀ դրամ)*	40744	120.6[1]	41000 [2]	109.4[1, 2]
Տնտեսապես ակտիվ բնակչություն *(հազար մարդ)*	1230.9	-	1229.0	-
Պաշտոնապես գրանցված գործազուրկներ *(հազար մարդ)*	116.3	-	115.8	-
Գործազրկության մակարդակը *(%)*	9.4	-	9.4	-

II. Արտաքին հատված

Անվանում	*2004 թ. հունվար-սեպտեմբեր* *(մլն ԱՄՆ դոլար)*	*2004 թ. հունվար-սեպտեմբերը 2003 թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ (%)*	*2004 թ. հունվար–հոկտեմբեր* *(մլն ԱՄՆ դոլար)*	*2004 թ. հունվար- հոկտեմբերը 2003 թ. հունվար- հոկտեմբերի նկատմամբ (%)*
Արտահանում *(ՖՕԲ)*	511.1	101.3	581.8	101.5
Ներմուծում *(ՍԻՖ)*	974.5	104.1	1087.8	103.9
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	463.5	107.3	506.0	106.7

III. Գների ինդեքսներ

ժամանակաշրջան	*Սպառողական գների ինդեքս*	*Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքս*	*Գների ինդեքս կապիտալ շինարարությունում*	*Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս*
նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	102.5	99.5	100.3	98.5
Փետրվար	99.4	108.6	97.9	101.0
Մարտ	100.3	101.9	102.4	97.2
Ապրիլ	101.2	96.1	99.8	99.8
Մայիս	101.1	102.1	99.9	99.6
Հունիս	99.9	103.8	100.0	88.5
Հուլիս	97.5	96.7	99.0	90.6
Օգոստոս	97.6	101.2	99.7	80.1
Սեպտեմբեր	99.3	99.3	99.9	101.5
Հոկտեմբեր	100.1	102.5	100.2	99.0
2004 թ. հունվար – հոկտեմբերը 2003 թ. հունվար – հոկտեմբերի համեմատությամբ	107.7	121.3	101.7	109.1

IV. Գնաճ

Ժամանակաշրջան	*2002*	*2003*	*2004*	*2004*
	Նախորդ ամսվա նկատմամբ (%)			*Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*
Հունվար	2.2	4.1	2.5	2.5
Փետրվար	-0.7	-1.5	-0.6	1.9
Մարտ	-0.6	-0.5	0.3	2.2
Ապրիլ	2.5	2.0	1.2	3.5
Մայիս	1.7	1.2	1.1	4.7
Հունիս	-0.5	1.4	-0.1	4.5
Հուլիս	-5.0	-5.5	-2.5	1.9
Օգոստոս	-3.0	-2.3	-2.4	-0.5
Սեպտեմբեր	-0.6	2.5	-0.7	-1.3
Հոկտեմբեր	0.5	-0.1	0.1	-1.1
Նոյեմբեր	2.2	2.2		
Դեկտեմբեր	3.6	5.2		
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	2.0	8.6		
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	1.1	4.7		

V. Բնականոն գնաճի փոփոխությունները[1]

Ցուցանիշ	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004
Նախորդ ամսվա նկատմամբ (%)										
Հունվար	3.03	2.07	0.99	2.80	0.34	0.25	0.46	0.35	0.69	0.65
Փետրվար	0.59	1.19	0.57	1.06	-0.12	-0.15	-0.12	-0.29	-0.46	0.05
Մարտ	1.58	-0.19	0.16	-0.23	-0.39	-0.33	-0.07	-0.17	0.00	0.03
Ապրիլ	5.08	-0.77	0.39	-0.96	-0.47	-0.26	0.02	0.39	0.23	0.05
Մայիս	3.51	-0.90	0.24	-0.89	-0.54	-0.27	0.18	-0.12	0.06	0.04
Հունիս	0.58	-0.61	2.22	-0.76	-0.11	-0.37	-0.02	-0.14	0.61	-0.13
Հուլիս	-1.69	-0.66	4.73	-0.32	0.00	-0.39	-0.31	-0.33	-0.55	-0.50
Օգոստոս	-1.22	0.23	0.55	-0.43	-0.28	-1.01	-0.12	-0.91	-0.18	-0.31
Սեպտեմբեր	0.12	-0.01	1.44	0.16	-0.32	-0.22	-0.37	-0.19	1.20	-0.30
Հոկտեմբեր	2.63	0.15	0.52	-0.01	-0.21	0.04	0.04	0.14	0.04	-0.16
Նոյեմբեր	2.21	0.93	0.59	0.31	-0.07	0.17	0.17	0.38	0.94	
Դեկտեմբեր	5.09	0.55	0.19	0.06	0.04	0.24	0.26	0.66	2.07	
Նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)										
Հունվար	321.07	33.70	9.10	18.57	-1.18	-2.75	0.04	0.71	1.16	4.45
Փետրվար	268.83	40.09	1.44	18.86	-2.64	-3.08	-0.02	0.34	0.86	5.60
Մարտ	179.63	39.43	1.22	18.08	-2.75	-3.13	0.22	-0.06	1.04	6.37
Ապրիլ	116.85	29.06	2.86	14.25	-2.93	-2.88	0.49	0.77	0.37	6.39
Մայիս	70.63	25.39	4.94	12.96	-1.95	-2.48	0.99	0.38	0.49	6.23
Հունիս	60.29	14.46	7.26	10.89	-1.35	-2.75	0.71	0.74	2.44	5.41
Հուլիս	66.33	13.66	14.25	7.04	-0.98	-2.92	1.00	0.03	2.26	6.71
Օգոստոս	61.60	12.46	14.35	5.56	-0.72	-3.77	1.84	-0.69	2.61	6.90
Սեպտեմբեր	56.41	11.21	16.62	2.61	-1.28	-3.13	1.90	-0.99	5.33	6.02
Հոկտեմբեր	53.23	6.95	16.56	1.87	-1.34	-3.24	1.78	-0.38	4.65	5.67
Նոյեմբեր	48.06	6.01	16.34	0.43	-1.82	-2.98	1.73	0.08	4.23	
Դեկտեմբեր	22.86	3.12	16.60	-0.36	-1.57	-2.39	1.51	0.71	4.67	

VI. Բնականոն գնաճին առավելապես նպաստող 10 ապրանքատեսակները[1]

Անվանում	*Նպաստումը բնականոն գնաճին, տոկոսային կետ*
Նախորդ ամսվա նկատմամբ	
Բնականոն գնաճ, *այդ թվում*	**-0.16**
շաքարավազ	0.04
ծխախոտ «Գառնի»	0.04
կարտոֆիլ	0.04
տավարի միս	0.03
բրինձ	0.02
նրբերշիկ	0.02
հաց I տեսակի	0.02
խոզի միս	0.02
եփած երշիկ	0.01
հավի բուդ	0.01

[1] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների:
[2] Ըստ ՀՀ ԱՎԾ նախնական տվյալների:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ[1]


(մլն ՀՀ դրամ)

Ժամանակաշրջան	Պահանջներ Կառավարության նկատմամբ			Կառավարության ավանդներ					Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ[2]	Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ[23]
	պետական կարճաժամկետ պարտատոմսեր	պետական միջին-կտրոնային պարտատոմսեր	ընդամենը	կենսաթոշ. կառավ. հաշիվներ և ավանդներ դրամով	կենսաթոշ. կառավ. հաշիվներ արտարժ.	ՕՀԳ-երի միջոցներ դրամով	ՕՀԳ-երի միջոցներ արտարժույթով	ընդամենը		
2003										
Դեկտեմբեր	0	1047	1047	32357	156	41	0	32554	**-31507**	***-31800***
2004										
Հունվար	0	1047	1047	41597	156	3	0	41757	**-40710**	***-40804***
Փետրվար	0	1047	1047	42325	156	0	0	42481	**-41434**	***-41624***
Մարտ	0	0	0	35028	155	0	0	35184	**-35184**	***-35507***
Ապրիլ	0	1055	1055	37412	151	0	0	37563	**-36508**	***-36537***
Մայիս	0	3710	3710	32052	152	9	0	32212	**-28502**	***-28502***
Հունիս	0	3710	3710	35843	148	8	0	35999	**-32289**	***-32285***
Հուլիս	0	5048	5048	38690	143	8	29	38870	**-33822**	***-33705***
Օգոստոս	0	5048	5048	38923	142	15	29	39110	**-34062**	***-33936***
Սեպտեմբեր	0	5133	5133	38039	140	106	28	38314	**-33181**	***-33139***
Հոկտեմբեր	223	5100	5323	39971	139	19	37	40167	**-34844**	***-34749***

[1] Ներկայացված ցուցանիշները հաշվարկված են կանխիկ սկզբունքի մեթոդով՝ հակառակ դեպքում առանձին նշում է կատարված:

[2] Կառավարության նկատմամբ պահանջների և Կառավարության ավանդների տարբերությունը:


[3] Հաշվարկված են կուտակման սկզբունքի մեթոդով:



ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ [1, 2]

(մլն ՀՀ դրամ)

Ժամկետ	Առևտրային բանկերի պարտավորությունները Կառավարության նկատմամբ[3]	ԿԲ պարտավորությունները Կառավարության նկատմամբ[4]	Ընդամենը
2003			
Դեկտեմբեր	12279	32554	44833
2004			
Հունվար	12107	41757	53864
Փետրվար	12452	42481	54933
Մարտ	13353	35184	48537
Ապրիլ	13608	37563	51171
Մայիս	13587	32212	45798
Հունիս	12946	35999	48946
Հուլիս	11808	38870	50678
Օգոստոս	12271	39110	51381
Սեպտեմբեր	12837	38314	51151
Հոկտեմբեր	13530	40167	53697



[1] Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ: Ներկայացված տվյալները հաշիվների մնացորդներն են ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

[2] Ներառված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին, այսինքն ավանդատուների կողմից իրենց միջոցների տնօրինման սահմանափակումներ չկան:

[3] Ընդգրկված են առևտրային բանկերի ցպահանջ և ժամկետային պարտավորությունները Գանձապետարանի նկատմամբ: 2004 թ. օգոստոսից ներառված են նաև ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի նկատմամբ պարտավորությունները:

[4] Ընդգրկված են հանրապետական բյուջեի և ՏԻԳ-երի միջոցները:

ՓՈՂԻ ԲԱԶԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 03[4]	Հ - 04	Փ - 04	Մ - 04	Ա - 04	Մ - 04	Հ - 04	Հ - 04	Օ - 04	Ս - 04	Հ - 04
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)											
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [1,2]	***153802***	***151496***	***148209***	***145491***	***141524***	***134241***	***139660***	***145328***	***144598***	***145041***	***148161***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-35216***	***-48377***	***-48226***	***-42062***	***-37434***	***-30394***	***-33408***	***-32309***	***-32809***	***-30903***	***-32339***
Կառավարություն	-31507	-40710	-41434	-35184	-36508	-28502	-32289	-33822	-34062	-33181	-34844
Բանկեր	8600	4375	3487	4344	6205	4599	9096	14103	14103	13641	13473
այդ թվում՝ ռեպո համաձայն.	0	0	0	0	0	0	0	0	0	0	252
ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի ներգրավման սվոփ	0	0	0	0	0	0	0	2403	2403	1941	1520
Ավանդներ (-)	-100	-3300	-2150	-3710	0	0	0	0	0	0	0
Հակադարձ ռեպո (-)	0	-1025	-1031	0	0	-924	-2304	0	0	0	0
ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի տրամադրման սվոփ(-)	0	0	-2032	-646	-2795	-3478	0	0	0	0	0
Զուտ այլ ակտիվներ	-12309	-12042	-10279	-11222	-7131	-6491	-10215	-12590	-12850	-11363	-10968
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	***116654***	***105172***	***101742***	***103573***	***102790***	***103077***	***106847***	***111982***	***112615***	***113835***	***115182***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***118586***	***103119***	***99983***	***103429***	***104090***	***103847***	***106252***	***113019***	***111788***	***114137***	***115822***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	96838	83686	84225	84317	83499	83631	87022	90369	92336	92146	92716
Պարտադիր պահուստ. (ՀՀ դրամով)	21047	18856	15243	18155	20088	19402	18732	22144	18983	21519	22573
Այլ հաշիվներ	700	577	515	957	503	814	498	506	469	472	533
Այլ հաշիվներ (ՀՀ դրամով)	657	517	493	528	481	810	457	503	466	469	493
Այլ հաշիվներ (արտարժույթով)	43	60	21	429	22	4	41	3	3	3	40
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)											
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-2306***	***-3287***	***-2718***	***-3967***	***-7283***	***5419***	***5668***	***-730***	***443***	***3121***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-13161***	***151***	***6164***	***4628***	***7040***	***-3014***	***1099***	***-500***	***1906***	***-1436***
Կառավարություն	-	-9203	-724	6250	-1324	8006	-3787	-1533	-240	881	-1663
Բանկեր	-	-4225	-888	857	1861	-1606	4497	5007	0	-462	-168
այդ թվում՝ ավանդներ (-)	-	3200	-1150	1560	-3710	0	0	0	0	0	0
Զուտ այլ ակտիվներ	-	267	1763	-943	4091	640	-3724	-2375	-260	1487	395
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	***-***	***-11482***	***-3430***	***1831***	***-783***	***288***	***3770***	***5134***	***634***	***1220***	***1346***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***-***	***-15467***	***-3136***	***3446***	***661***	***-243***	***2405***	***6767***	***-1230***	***2349***	***1685***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-13152	539	92	-818	132	3391	3347	1968	-190	570
Պարտադիր պահուստ. (ՀՀ դրամով)	-	-2191	-3613	2912	1933	-686	-670	3412	-3161	2537	1053
Այլ հաշիվներ	-	-123	-62	442	-454	311	-316	8	-37	2	61
Այլ հաշիվներ (ՀՀ դրամով)	-	-140	-24	35	-47	329	-353	46	-37	3	24
Այլ հաշիվներ (արտարժույթով)	-	17	-39	408	-407	-18	37	-38	0	0	37
(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)											
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-1.5***	***-2.2***	***-1.8***	***-2.7***	***-5.1***	***4.0***	***4.1***	***-0.5***	***0.3***	***2.2***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-37.4***	***0.3***	***12.8***	***11.0***	***18.8***	***-9.9***	***3.3***	***-1.5***	***5.8***	***-4.6***
Կառավարություն	-	-29.2	-1.8	15.1	-3.8	21.9	-13.3	-4.7	-0.7	2.6	-5.0
Բանկեր	-	-49.1	-20.3	24.6	42.8	-25.9	97.8	55.0	0	-3	-1
Զուտ այլ ակտիվներ	-	2.2	14.6	-9.2	36.5	9.0	-57.4	-23.2	-2.1	11.6	3.5
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	***-***	***-9.8***	***-3.3***	***1.8***	***-0.8***	***0.3***	***3.7***	***4.8***	***0.6***	***1.1***	***1.2***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***-***	***-13.0***	***-3.0***	***3.4***	***0.6***	***-0.2***	***2.3***	***6.4***	***-1.1***	***2.1***	***1.5***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-13.6	0.6	0.1	-1.0	0.2	4.1	3.8	2.2	-0.2	0.6
Պարտադիր պահուստ. (ՀՀ դրամով)	-	-10.4	-19.2	19.1	10.6	-3.4	-3.5	18.2	-14.3	13.4	4.9
Այլ հաշիվներ	-	-17.6	-10.7	85.8	-47.4	61.8	-38.8	1.6	-7.2	0.5	13.0

[1] Առանց սեփականաշնորհման միջոցների: ԶԱՍ-ն ընդգրկում են փոխարկելի արտարժույթով ակտիվները:

[2] ԶԱՍ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար = 566 ՀՀ դրամ, 1 ՀՓԻ = 1.4860 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 1.2407 ԱՄՆ դոլար, 1 ունցիա ոսկի = 413.5 ԱՄՆ դոլար:

[3] Փողի բազան հաշվարկված է որպես տվյալ ամսվա վերջին օրվան նախորդող հինգ օրերի և հաջորդ ամսվա սկզբի հինգ օրերի միջին:

[4] Ներառում է ԿԲ եզրափակիչ շրջանառության արդյունքները:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵԿՇԻՌ [1]

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ-03[5]	Հ–04	Փ-04	Մ-04	Ա-04	Մ-04	Հ-04	Հ-04	Օ-04	Ս-04	Հ-04
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթով)	**40586**	**43037**	**42114**	**43607**	**39074**	**42442**	**40235**	**40312**	**45593**	**47791**	**45639**
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	97945	101612	107518	106957	93605	97325	98713	101729	110844	115227	111028
Արտաքին պարտ. փոխարկելի արտարժույթով	-54608	-55919	-62767	-60710	-52144	-52058	-55532	-56811	-61716	-63805	-61106
Արտաքին պարտավորություններ ՀՀ դրամով	-2750	-2656	-2637	-2640	-2388	-2825	-2946	-4606	-3535	-3630	-4284
ԶՆԱ	**100535**	**98225**	**99613**	**102516**	**107348**	**106180**	**109716**	**116307**	**114107**	**118755**	**123780**
Կառավարություն[2]	16902	16184	16484	17318	17930	16387	18038	18915	19293	18911	20217
Ջուտ պահանջներ ԿԲ նկատմամբ	16607	18601	15809	17876	17850	19201	13784	11937	9796	12906	13287
Պահուստային ակտիվներ	25478	27360	24623	26750	26908	28321	25368	26120	24065	26752	26840
Պարտավորություններ ԿԲ նկատմամբ	-8870	-8759	-8814	-8874	-9058	-9119	-11584	-14182	-14269	-13845	-13553
Տնտեսություն	103218	101543	106737	109837	115217	117277	121018	123504	127747	131844	132080
Ձեռնարկություններ	61094	59714	62114	62528	64608	65074	67201	69368	71872	74063	72851
Դրամով	22875	23017	23412	22192	22953	24122	25324	26973	26850	26532	25454
Արտարժույթով	38183	36661	38666	40299	41623	40921	41848	42367	44994	47503	47368
Արժեթղթեր	37	37	37	37	32	32	29	29	29	29	29
Տնային տնտեսություններ	35384	35916	38297	41222	43184	46330	47372	48430	49446	50704	51602
Դրամով	7839	7836	8353	8731	9409	10362	10871	11444	11956	12728	12652
Արտարժույթով	27544	28079	29944	32491	33775	35968	36501	36986	37490	37976	38950
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	59	35	35	33	25	34	43	41	50	43	44
Դրամով	12	13	14	9	12	25	34	34	31	30	30
Արտարժույթով	47	23	21	24	13	10	9	7	19	13	15
Այլ ֆինանսական կազմակերպություններ	6645	5841	6254	6018	7398	5838	6401	5664	6378	7034	7583
Դրամով	2145	1752	1874	2411	2627	1566	2179	1909	2377	2784	2714
Արտարժույթով	4500	4090	4380	3607	4771	4273	4223	3755	4001	4250	4870
Այլ ռեզիդենտներ[3]	37	37	37	36	1	1	1	1	1	0	0
Դրամով	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Արտարժույթով	37	37	37	36	1	1	1	1	1	0	0
Ջուտ այլ ակտիվներ	-36193	-38103	-39417	-42515	-43650	-46686	-43123	-38049	-42729	-44907	-41805
Արտաքին ակտիվներ ՀՀ դրամով	3028	2784	2799	2170	2224	1892	2375	2902	2295	2167	2210
Արտաքին ակտիվներ (ոչ փոխարկելի արտարժ.)	1974	12319	15827	12148	2170	3388	4071	3958	3012	3959	-4593
Արտաքին պարտ. (ոչ փոխարկելի արտարժ.)	-412	-10571	-14553	-10828	-1047	-1971	-2605	-1250	-1832	-2727	-2993
Ներդրումներ փայաբաժիններում	514	501	501	456	458	458	463	460	460	460	460
Միջբանկային պահանջներ	3574	4793	4764	4541	5280	5040	6512	4936	5698	5163	3863
Այլ ակտիվներ	26558	27114	26839	25608	26285	26764	30042	31714	31205	32633	32990
Միջբանկային պարտավորություններ	-3544	-4654	-4660	-4491	-5232	-4818	-6457	-4938	-5705	-4686	-3470
Դրամական շուկայի գործիքներ	-562	-566	0	0	0	0	0	0	0	0	0
Կապիտալ հաշիվներ	-55148	-54195	-55428	-56376	-56873	-56862	-58872	-59764	-61156	-63254	-63675
Այլ պարտավորություններ	-12175	-15628	-15506	-15744	-16915	-20576	-18651	-16066	-16706	-18622	-15782
ԱՎԱՆԴՆԵՐ	**141121**	**141262**	**141727**	**146123**	**146421**	**148622**	**149951**	**156620**	**159699**	**166546**	**169419**
Դրամով ավանդներ	40756	40476	38928	39744	41043	42743	40651	38229	36097	39321	41083
Ցպահանջ ավանդներ[4]	30618	26540	26298	26284	28080	28337	28398	28577	27312	30528	31743
Ժամկետային ավանդներ	10138	13936	12629	13459	12963	14406	12253	9652	8785	8792	9341
Ավանդներ արտարժույթով	100365	100785	102799	106379	105378	105879	109300	118391	123602	127226	128336
Ցպահանջ ավանդներ	51034	48978	49878	54173	52273	52863	55355	59898	63413	65843	66269
Ժամկետային ավանդներ	49331	51808	52922	52206	53105	53016	53946	58493	60190	61383	62067

[1] Ներառված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին, այսինքն ավանդատուների կողմից իրենց միջոցների տնօրինման սահմանափակումներ չկան:

[2] ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի հաշիվներն առևտրային բանկերում 2004 թ. օգոստոսից հաշվառվում են իբրև բանկային համակարգի պարտավորություն Կառավարության նկատմամբ: Հիմնադրամի հաշիվները մինչև 2004 թ. օգոստոսը ներառվել են ցպահանջ ավանդներում, քանի որ դրանց համար առանձին հաշվառում չի վարվել:

[3] Չդասակարգված պահանջներ: «Փողի զանգվածի կառուցվածքը» աղյուսակում սույն պահանջներն ընդգրկված են «Ձեռնարկություններ և կազմակերպություններ» տողում:

[4] 2004 թ. օգոստոսից ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի հաշիվներն առևտրային բանկերում չեն ներառվել:

[5] Կատարվել է հաշիվների վերադասակարգում համապատասխան ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության նոր ձեռնարկի (2004 թ.), որի արդյունքում որոշ ցուցանիշներ տարբերվում են 2003 թ. հրապարակումներից:

ՓՈՂԻ ՋԱՆԳՎԱԾԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 03[8]	Հ - 04	Փ - 04	Մ - 04	Ա - 04	Մ – 04	Հ - 04	Հ - 04	Օ - 04	Ս - 04	Հ - 04
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)											
ՋՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [2]	***194389***	***194533***	***190323***	***189098***	***180598***	***176683***	***179895***	***185640***	***190190***	***192832***	***193800***
ՋՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***39429***	***26434***	***31603***	***37516***	***45493***	***51510***	***52807***	***57453***	***56810***	***60531***	***63790***
Կառավարություն [3]	-14605	-24525	-24950	-17866	-18577	-12115	-14252	-14907	-14769	-14270	-14627
Տնտեսություն	103257	101576	106777	109876	115261	117320	121081	123572	127810	131902	132133
Ձեռնարկ. և կազմակերպ.	61131	59751	62151	62564	64609	65075	67202	69369	71872	74064	72851
որից՝ կուտակված տոկոսներ	455	497	478	531	539	596	603	667	664	666	675
Տնային տնտեսություններ	35422	35949	38337	41261	43229	46372	47435	48498	49509	50762	51655
որից՝ կուտակված տոկոսներ	474	534	564	641	616	689	719	785	827	779	760
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	59	35	35	33	25	34	43	41	50	43	44
որից՝ կուտակված տոկոսներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Այլ ֆինանսական կազմակերպություններ	6645	5841	6254	6018	7398	5838	6401	5664	6378	7034	7583
որից՝ կուտակված տոկոսներ	71	43	58	60	67	59	46	28	49	59	62
Ջուտ այլ ակտիվներ	-49223	-50617	-50224	-54494	-51191	-53695	-54023	-51212	-56231	-57101	-53716
ԴՐԱՄԱՅԻՆ ՋԱՆԳՎԱԾ [4]	***133230***	***119963***	***118916***	***119620***	***120496***	***122117***	***123171***	***124510***	***123216***	***125965***	***129040***
ՓՈՂԻ ՋԱՆԳՎԱԾ *(առանց կուտ. տոկոսների)*	***233198***	***220283***	***221244***	***225903***	***225358***	***227448***	***232002***	***242402***	***246283***	***252638***	***256798***
ՓՈՂԻ ՋԱՆԳՎԱԾ [5]	***233818***	***220967***	***221926***	***226614***	***226091***	***228193***	***232702***	***243093***	***247000***	***253363***	***257590***
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	91997	79128	79685	79535	79166	78757	82253	85968	86831	86345	87638
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով [6,7]	31275	27057	26791	26812	28561	29147	28855	29080	27778	30997	32235
կուտակված տոկոսներ	17	16	28	22	26	39	35	40	37	29	32
ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	10138	13936	12629	13459	12963	14406	12253	9652	8785	8792	9341
կուտակված տոկոսներ	163	142	163	164	168	154	154	149	141	140	142
Արտարժույթով ավանդներ	100408	100846	102820	106808	105400	105883	109341	118394	123606	127229	128376
Ցպահանջ [6]	51076	49038	49899	54602	52296	52867	55396	59901	63416	65846	66309
կուտակված տոկոսներ	5	6	12	7	9	15	8	13	15	9	17
ժամկետային	49331	51808	52922	52206	53105	53016	53946	58493	60190	61383	62067
կուտակված տոկոսներ	435	520	480	518	530	537	501	489	524	546	601
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)											
ՋՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	-	***144***	***-4210***	***-1225***	***-8500***	***-3915***	***3212***	***5745***	***4550***	***2642***	***969***
ՋՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	-	***-12995***	***5169***	***5913***	***7976***	***6017***	***1297***	***4647***	***-643***	***3722***	***3258***
Կառավարություն	-	-9920	-425	7084	-711	6462	-2137	-656	138	499	-357
Տնտեսություն	-	-1681	5201	3099	5385	2059	3761	2491	4238	4092	231
Ձեռնարկ. և կազմակերպ.	-	-1380	2400	413	2045	466	2126	2167	2503	2191	-1212
որից՝ կուտակված տոկոսներ	-	42	-19	53	8	57	7	64	-3	2	9
Տնային տնտեսություններ	-	527	2388	2924	1968	3143	1063	1063	1011	1253	892
որից՝ կուտակված տոկոսներ	-	60	30	77	-25	73	30	66	41	-48	-19
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	-	-24	0	-2	-8	9	9	-2	10	-8	2
որից՝ կուտակված տոկոսներ	-	0	0	0	0	0	0	0	0	0	0
Այլ ֆինանսական կազմակերպություններ	-	-804	413	-236	1380	-1560	563	-738	715	656	549
որից՝ կուտակված տոկոսներ	-	-28	15	2	7	-8	-13	-17	21	10	3
Ջուտ այլ ակտիվներ	-	-1394	393	-4270	3302	-2503	-328	2812	-5020	-869	3384
ԴՐԱՄԱՅԻՆ ՋԱՆԳՎԱԾ	-	***-13267***	***-1048***	***705***	***876***	***1621***	***1054***	***1339***	***-1294***	***2749***	***3074***
ՓՈՂԻ ՋԱՆԳՎԱԾ *(առանց կուտ. տոկոսների)*	-	***-12915***	***961***	***4659***	***-545***	***2090***	***4554***	***10400***	***3881***	***6355***	***4160***
ՓՈՂԻ ՋԱՆԳՎԱԾ	-	***-12851***	***959***	***4688***	***-523***	***2102***	***4509***	***10392***	***3907***	***6363***	***4227***
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	-	-12869	557	-150	-369	-409	3496	3715	864	-486	1292
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	-	-4218	-266	21	1749	586	-292	225	-1302	3219	1238
կուտակված տոկոսներ	-	-1	12	-6	4	13	-4	5	-4	-8	3
ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	-	3798	-1307	830	-496	1443	-2153	-2601	-867	7	549
կուտակված տոկոսներ	-	-21	21	2	4	-14	0	-5	-7	-1	2
Արտարժույթով ավանդներ	-	438	1974	3988	-1408	483	3458	9053	5212	3623	1147
Ցպահանջ	-	-2038	861	4703	-2307	572	2529	4505	3515	2430	463
կուտակված տոկոսներ	-	1	6	-5	2	6	-7	4	2	-5	8
ժամկետային	-	2477	1114	-716	899	-89	930	4547	1697	1193	685
կուտակված տոկոսներ	-	85	-40	38	12	7	-36	-13	35	22	54

(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)											
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***0.1***	***-2.2***	***-0.6***	***-4.5***	***-2.2***	***1.8***	***3.2***	***2.5***	***1.4***	***0.5***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***-33.0***	***19.6***	***18.7***	***21.3***	***13.2***	***2.5***	***8.8***	***-1.1***	***6.6***	***5.4***
Կառավարություն	-	-67.9	-1.7	28.4	-4.0	34.8	-17.6	-4.6	0.9	3.4	-2.5
Տնտեսություն	-	-1.6	5.1	2.9	4.9	1.8	3.2	2.1	3.4	3.2	0.2
Ձեռնարկ. և կազմակերպ.	-	- 2.3	4.0	0.7	3.3	0.7	3.3	3.2	3.6	3.0	-1.6
Տնային տնտեսություններ	-	1.5	6.6	7.6	4.8	7.3	2.3	2.2	2.1	2.5	1.8
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	-	-40.7	0.7	-6.4	-24.2	36.0	25.8	-4.8	23.3	-15.2	3.8
Այլ ֆինանսական կազմակերպություններ	-	-12.1	7.1	-3.8	22.9	-21.1	9.7	-11.5	12.6	10.3	7.8
Զուտ այլ ակտիվներ	-	-2.8	0.8	-8.5	6.1	-4.9	-0.6	5.2	-9.8	-1.5	5.9
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ	-	***-10.0***	***-0.9***	***0.6***	***0.7***	***1.3***	***0.9***	***1.1***	***-1.0***	***2.2***	***2.4***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ *(առանց կուտ. տոկոսների)*	-	***-5.5***	***0.4***	***2.1***	***-0.2***	***0.9***	***2.0***	***4.5***	***1.6***	***2.6***	***1.6***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ	-	***-5.5***	***0.4***	***2.1***	***-0.2***	***0.9***	***2.0***	***4.5***	***1.6***	***2.6***	***1.7***
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	-	-14.0	0.7	-0.2	-0.5	-0.5	4.4	4.5	1.0	-0.6	1.5
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	-	-13.5	-1.0	0.1	6.5	2.1	-1.0	0.8	-4.5	11.6	4.0
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	-	37.5	-9.4	6.6	-3.7	11.1	-14.9	-21.2	-9.0	0.1	6.2
Արտարժույթով ավանդներ	-	0.4	2.0	3.9	-1.3	0.5	3.3	8.3	4.4	2.9	0.9
Ցպահանջ	-	-4.0	1.8	9.4	-4.2	1.1	4.8	8.1	5.9	3.8	0.7
Ժամկետային	-	5.0	2.1	-1.4	1.7	-0.2	1.8	8.4	2.9	2.0	1.1

[1] Ներառված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին, այսինքն ավանդատուների կողմից իրենց միջոցների տնօրինման սահմանափակումներ չկան:

[2] ԶԱՀ-ն ընդգրկում են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները: Կենտրոնական բանկի ԶԱՀ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար = 566 ՀՀ դրամ, 1 ՀՓԻ = 1.4860 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 1.2407 ԱՄՆ դոլար, 1 ունցիա ոսկի = 413.5 ԱՄՆ դոլար:

[3] ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի հաշիվներն առևտրային բանկերում 2004 թ. օգոստոսից հաշվառվում են իբրև բանկային համակարգի պարտավորություն Կառավարության նկատմամբ: Հիմնադրամի հաշիվները մինչև 2004 թ. օգոստոսը ներառվել են ցպահանջ ավանդներում, քանի որ դրանց համար առանձին հաշվառում չի վարվել:

[4] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ միայն դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները (առանց կուտակված տոկոսների):

[5] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները, արտարժութային ավանդները (ներառյալ կուտակված տոկոսները):

[6] Ընդգրկում են ռեզիդենտների հաշիվները և ցպահանջ ավանդները:

[7] 2004 թ. օգոստոսից ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի հաշիվներն առևտրային բանկերում չեն ներառվել:

[8] Ներառում է ԿԲ եզրափակիչ շրջանառության արդյունքները: Կատարվել է հաշիվների վերադասակարգում համապատասխան ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության նոր ձեռնարկի (2004 թ.), որի արդյունքում որոշ ցուցանիշներ տարբերվում են 2003 թ. հրապարակումներից:

ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ [1,2]

(մլն ՀՀ դրամ)

ժամկետ	Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով [4]	M1 [5]	ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	M2 [6]	Արտարժույթով ավանդներ	M2X [7]
2003							
Դեկտեմբեր	91997	31258	123255	9975	133230	99967	233197
2004							
Հունվար	79128	27041	106169	13794	119963	100320	220283
Փետրվար	79685	26763	106449	12467	118916	102328	221244
Մարտ	79535	26790	106325	13295	119620	106283	225903
Ապրիլ	79166	28535	107701	12795	120496	104861	225358
Մայիս	78757	29108	107865	14252	122117	105331	227448
Հունիս	82253	28820	111072	12098	123171	108832	232002
Հուլիս	85968	29039	115007	9503	124510	117892	242402
Օգոստոս	86831	27742	114573	8643	123216	123067	246283
Սեպտեմբեր	86345	30968	117313	8652	125965	126673	252638
Հոկտեմբեր	87638	32203	119841	9199	129040	127758	256798

ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ [1,3]

(մլն ՀՀ դրամ)

ժամկետ	Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով [4]	M1 [5]	ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	M2 [6]	Արտարժույթով ավանդներ	M2X [7]
2003							
Դեկտեմբեր	91997	31275	123272	10138	133410	100408	233818
2004							
Հունվար	79128	27057	106185	13936	120121	100846	220967
Փետրվար	79685	26791	106476	12629	119106	102820	221926
Մարտ	79535	26812	106347	13459	119806	106808	226614
Ապրիլ	79166	28561	107727	12963	120690	105400	226091
Մայիս	78757	29147	107904	14406	122310	105883	228193
Հունիս	82253	28855	111108	12253	123360	109341	232702
Հուլիս	85968	29080	115048	9652	124699	118394	243093
Օգոստոս	86831	27778	114610	8785	123394	123606	247000
Սեպտեմբեր	86345	30997	117342	8792	126134	127229	253363
Հոկտեմբեր	87638	32235	119873	9341	129214	128376	257590

[1] Ներառված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին, այսինքն ավանդատուների կողմից իրենց միջոցների տնօրինման սահմանափակումներ չկան:

[2] Ավանդների մեջ կուտակված տոկոսները չեն ընդգրկված:


[3] Ավանդների մեջ ընդգրկված են կուտակված տոկոսները:


[4] 2004 թ. օգոստոսից ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի հաշիվներն առևտրային բանկերում չեն ներառվել:


[5] M1-ն ընդգրկում է շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամը և դրամով ցպահանջ ավանդները (ներառյալ հաշիվները):


[6] M2-ը դրամային զանգվածն է. ընդգրկում է M1-ը և դրամով ժամկետային ավանդները:


[7] M2X-ը փողի զանգվածն է. ընդգրկում է M2-ը և արտարժույթով ավանդները (ներառյալ հաշիվները):



Փողի բազան տատանումների թույլատրելի միջակայքում
